

Հաստատում եմ՝  
«Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան»  
հիմնադրամի ղեկավար Դ.Գյուրջինյան



## ԿԱՐԾԻՔ

### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**Նինա Իշխանի Մարգարյանի «Հայաստանի հանրապետության տրանսպորտային-լոգիստիկ զարգացման քաղաքական չափումը ազգային անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ԻԳ 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ**

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՄՀՔ ֆակուլտետի ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փոխադասարանության ամբիոնի 2026թ. հունվարի 7-ի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի ժ/պ, փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանը, ք.գ.դ., պրոֆեսոր Վահե Դավթյանը, ի.գ.դ., ք.գ.թ., դոցենտ Արմեն Հարությունյանը, փ.գ.թ., դոցենտ Գևորգ Հակոբյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Արմեն Պետրոսյանը, ք.գ.թ., դոցենտ Նարեկ Գրիգորյանը, պ.գ.թ., դոցենտ Գեորգի Միրզաբեկյանը, ք.գ.թ., դոցենտ Մարգարիտ Պետրոսյանը, ք.գ.թ. Վահե Առաքելյանը, ավագ դասախոս Լուսինե Պողոսյանը:

Նիստի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, դրված էր Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 056 մասնագիտական խորհրդին հրապարակային պաշտպանության ներկայացված Նինա Իշխանի Մարգարյանի «Հայաստանի հանրապետության տրանսպորտային-լոգիստիկ զարգացման քաղաքական չափումը ազգային անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ԻԳ 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության քննարկումը:

Ելույթ ունեցավ ատենախոսության գրախոս ի.գ.դ., ք.գ.թ., դոցենտ Արմեն Հարությունյանը՝ հրապարակելով իր գրավոր կարծիքը: Արտահայտվեցին նաև Վ.Դավթյանը, Ա.Պետրոսյանը, Գ.Միրզաբեկյանը, Վ.Առաքելյանը, Լ.Գրիգորյանը: Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի ժ/պ Վ. Ասլանյանը:

Քննարկելով Նինա Իշխանի Մարգարյանի «Հայաստանի հանրապետության տրանսպորտային-լոգիստիկ զարգացման քաղաքական չափումը ազգային անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ատենախոսությունը՝ նիստի մասնակիցները կատարեցին հետևյալ դիտարկումները և նկատառումները.

Ատենախոսության թեման՝ «Հայաստանի տրանսպորտային-լոգիստիկ համակարգի զարգացման քաղաքական չափումը ազգային անվտանգության ապահովման

համատեքստում», գիտական և գործնական արդիականություն ունի Հայաստանի ժամանակակից քաղաքական հետազոտությունների համար: Դրա նշանակությունը պայմանավորված է արդի աշխարհում ընթացող տարածաշրջային և գլոբալ գործընթացներով, որոնք բնութագրվում են այդ թվում նաև ազդեցության գոտիների վերաբաշխմամբ և սեկյուրիտիզացման մի շարք գործընթացներով, միջազգային դաշինքների վերակառուցմամբ և միջազգային որոշ խաղորդների դերի փոփոխմամբ: Անհրաժեշտություն է առաջանում վերանայել որոշակի երևույթների և համակարգերի վերաբերյալ մոտեցումները, այդ թվում՝ դրանց դիտարկումը բացառապես տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից, քանի որ դրանք կարող են ծառայել որպես քաղաքական նպատակներին հասնելու արդյունավետ գործիք: Այս համատեքստում կարևոր է դիտարկել նաև պետության տրանսպորտային համակարգը, որի զարգացման մակարդակն ու ինտեգրումը տարածաշրջանային և միջազգային տրանսպորտային նախագծերին անմիջական ազդեցություն ունի ոչ միայն երկրի տնտեսական զարգացման, այլև ազգային անվտանգության ապահովման վրա:

Հայաստանի Հանրապետության տրանսպորտային համակարգը կառուցվել է հիմնականում ԽՍՀՄ ժամանակաշրջանում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո ժառանգելով նաև այն բոլոր խնդիրները, որոնք առկա էին ստեղծումից ի վեր: Այդ խնդիրներն ավելի արդիական և տեսանելի են դարձել Հայաստանի անկախացումից հետո՝ տարածաշրջանային հակամարտությունների բռնկման ֆոնին, ինչպես նաև տնտեսական բարդ պայմաններում, երբ երկիրը, մի կողմից, բախվել է գոյաբանական նշանակություն ունեցող խնդիրներին (խոսքը վերաբերում է ԼՂ հակամարտությանը և դրա արդյունքում ՀՀ-ի դեմ Ադրբեյջանի և Թուրքիայի կողմից վարվող մեկուսացման քաղաքականությանը), իսկ մյուս կողմից՝ տնտեսական նոր համակարգ կառուցելու մարտահրավերին: Դրա հետ մեկտեղ պետության առջև ծառացել է միջազգային ասպարեզում հարաբերությունների վեկտորի կառուցման հարցը: Այս ամենը պայմանավորել է Հայաստանի տրանսպորտային-լոգիստիկ համակարգի ներկայիս վիճակը, որը հաճախ հանդիսանում է Հարավային Կովկասում խոշոր միջազգային խաղորդների (ԱՄՆ, ՌԴ, ԵՄ, Չինաստան, Թուրքիա, Իրան, Հնդկաստան) կողմից քաղաքական նպատակների հասնելու գործիք, ինչպես նաև գտնվում է մի շարք միջազգային տրանսպորտային նախագծերի (այդ թվում՝ TRACECA և «Հյուսիս-Հարավ») շահերի բախման ու մրցակցության կիզակետում: Ուստի Հայաստանի Հանրապետության տրանսպորտային-լոգիստիկ համակարգի խնդիրների քաղաքական պատճառների, շահերի և հետևանքների տեսանկյունից վերլուծությունը ազգային անվտանգության ապահովման համատեքստում դառնում է առավել քան արդիական:

Ատենախոսության վերնագիրը համապատասխանում է դրա բովանդակությանը և կատարված ուսումնասիրության բնույթին: Հետազոտության վարկածը, նպատակը և խնդիրները հստակ են ձևակերպված:

## Աշխատանքն աչքի է ընկնում գիտական նորությով, մասնավորապես՝

- Համապարփակ ուսումնասիրություն է իրականացվել Հարավային Կովկասի պետությունների տրանսպորտային-լոգիստիկ հիմքի կառուցման և զարգացման գործընթացի վերաբերյալ՝ սկսած ԽՍՀՄ կազմավորման ժամանակաշրջանից:
- Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ՀՀ տրանսպորտային-լոգիստիկ համակարգի զարգացմանը վերաբերող ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերը չեն համապատասխանում ազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերներին:
- Ձևակերպվել են Հարավային Կովկասում իրականացվող հիմնական տրանսպորտային-լոգիստիկ նախագծերին ՀՀ համակարգի ինտեգրման քաղաքական, ռազմավարական հիմքերը միջազգային ասպարեզում տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխությունների և տարածաշրջանում ստեղծված նոր իրականության համատեքստում:
- Կատարվել են կարևոր կանխատեսումներ Հարավային Կովկասում տրանսպորտային հաղորդակցությունների հնարավոր ապաշրջափակման դեպքում ՀՀ ազգային անվտանգությանը սպառնացող հիմնական մարտահրավերների վերաբերյալ:

### *Ատենախոսության կառուցվածքի և բովանդակության ակնարկ*

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, **երեք գլուխներից** (ինը ենթագլխից), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

- **Ներածություն:** Հստակ սահմանում է հետազոտության արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, դրա օբյեկտն ու առարկան:
- Ատենախոսության **առաջին գլուխը** նվիրված է հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերին: Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է «տրանսպորտային համակարգ», «տրանսպորտային լոգիստիկա», «տրանսպորտային-լոգիստիկ համակարգ» հասկացությունների վերաբերյալ գիտական և մասնագիտական դիսկուրսում առկա մոտեցումները, ներկայացրել այդ մոտեցումների թերությունները, ընդհանրությունները, տվյալ հասկացությունների տարանջատման անհրաժեշտությունը: Ներկայացվել է «տրանսպորտային-լոգիստիկ համակարգ» հասկացության քաղաքական չափումը՝ ելնելով պետության զարգացման համատեքստում տրանսպորտային համակարգի տեղի ու դերի վերաբերյալ մի շարք ականավոր հեղինակների դիտարկումներից, ինչպես նաև պատմական իրադարձությունների վերլուծությունից: Տրամաբանական անցում է կատարվում նաև «ազգային անվտանգություն» հասկացության սահմանման հիմնական մոտեցումներին թե՛ պաշտոնական փաստաթղթերի շրջանակներում, թե՛ գիտական հետազոտությունների ոլորտում, ինչը հնարավորություն է տալիս որոշել պետության տրանսպորտային-լոգիստիկ համակարգի դերը ազգային անվտանգության ապահովման գործում:



- **Երկրորդ գլուխը** ուսումնասիրում է Հայաստանի տրանսպորտային-լոգիստիկ համակարգի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները՝ սկսած ԽՍՀՄ շրջանից, ինչպես նաև աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությանը Հայաստանի Հանրապետության տրանսպորտային-լոգիստիկ համակարգի ներկայիս վիճակի վրա: Նշված գլխի շրջանակներում ատենախոսն ուսումնասիրել է Խորհրդային Միության տրանսպորտային քաղաքականության առանձնահատկությունները, վերլուծել դրանց հիմքում ընկած գաղափարախոսական հիմքերը, ինչը հնարավորություն է տվել հեղինակին պնդել, որ ԽՍՀՄ տրանսպորտային-լոգիստիկ համակարգը դիտարկվել է ոչ միայն տնտեսական շահի պրիզմայի ներքո, այլ կառուցվել է՝ հաշվի առնելով ներքաղաքական նպատակները, ինչպես նաև աշխարհաքաղաքական շահերը: Ուսումնասիրվել են նաև Անդրկովկասյան տնտեսական շրջանի տրանսպորտային համակարգի կառուցման և զարգացման առանձնահատկությունները և քաղաքական չափումը: Համեմատություն է անցկացվել Հայկական, Վրացական, Ադրբեջանական ԽՍՀ-ների տրանսպորտային համակարգերի միջև, ինչպես նաև վերհանվել են տվյալ համակարգերի կառուցման ընթացքում առաջացած խնդիրները, որոնք ավելի են սրվել ԽՍՀՄ փլուզումից հետո՝ տարածաշրջանում առկա հակամարտությունների ֆոնին: Հետազոտության նման կառուցվածքը հնարավորություն է տվել հեղինակին տրամաբանական անցում կատարել նորանկախ Հայաստանի տրանսպորտային-լոգիստիկ համակարգի կառուցվածքի առանձնահատկություններին, խորհրդային շրջանից ժառանգած խնդիրների, զարգացման ուղղվածության ուսումնասիրմանը:
- **Երրորդ գլուխում** վերլուծվել և վեր են հանվել միջազգային տրանսպորտային-լոգիստիկ նախագծերին ՀՀ ինտեգրման քաղաքական առանձնահատկությունները, այդ թվում՝ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, հաշվի առնելով Հարավային Կովկասի տարածաշրջանում ընթացող գործընթացները: Հեղինակը դիտարկել է Հարավային Կովկասի տարածքով անցնող հիմնական միջազգային տրանսպորտային միջանցքները՝ «Հյուսիս-Հարավ», TRACECA, այդ նախագծերի իրագործման քաղաքական նպատակները, տարածաշրջանային տրանսպորտային համակարգի կառուցման հարցում ներգրավված առաջատար միջազգային դերակատարների քաղաքական և աշխարհաքաղաքական շահերը՝ տվյալ միջանցքների զարգացման և շահագործման մեջ: Վերլուծության ընթացքում ատենախոսը փաստարկներ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության տրանսպորտային-լոգիստիկ ներուժի արհեստական սահմանափակման վերաբերյալ, ինչը պայմանավորված է Թուրքիայի և Ադրբեջանի քաղաքական դիրքորոշմամբ: Դիտարկվել է նաև Հայաստանի ներգրավվածության աստիճանը տարածաշրջանում տրանսպորտային խոշոր նախագծերից Հայաստան-Իրան-Հնդկաստան տրանսպորտային միջանցքում: Հեղինակը արխիվային փաստաթղթերի հիման վրա դիտարկում է «Զանգեզուրի միջանցքի» գաղափարի զարգացման պատմական և բանակցային փուլերը, ինչպես նաև ուսումնասիրում է Հայաստանի կողմից առաջարկված «Խաղաղության խաչմերուկ» նախագծի՝ ենթակառուցվածքներին վերաբերվող հատվածը, այն դիտարկելով ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի կողմից առաջարկված TRIPP-ի և տարածաշրջանում առկա այլ

նախագծերի համատեքստում: Վերլուծության արդյունքում ատենախոսն առանձնացնում է ազգային անվտանգությանը և երկրի կայուն զարգացմանը սպառնացող մի շարք մարտահրավերներ, որոնք կարող են լուրջ ազդեցություն թողնել երկրի հետագա զարգացման վրա՝ Հայաստանի Հանրապետությունը դարձնելով խոշոր միջազգային դերակատարների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Իրանի, Չինաստանի, Հնդկաստանի քաղաքական շահերի բախման ասպարեզ:

- **Եզրակացություն:** Ընդհանրացնում է ստացված արդյունքները և ձևակերպում է կոնկրետ առաջարկություններ, որոնք ուղղված են տրանսպորտային-լոգիստիկ համակարգի զարգացմանը և ազգային անվտանգության մարտահրավերներին արձագանքմանը:

### ***Արդյունքների հիմնավորվածությունը և գիտական արժեքը***

Եզրահանգումների բարձր հավաստիությունն ապահովվում է աղբյուրների նկատմամբ համալիր մոտեցմամբ՝ ներառյալ գիտական գրականության, նորմատիվ-իրավական ակտերի և էմպիրիկ տվյալների վերլուծությունը: Օգտագործվել է բավականաչափ աղբյուրաբանական և գիտական հենք: Հետազոտությունը միջառարկայական բնույթ է կրում, ինչն արտացոլվում է նաև ուսումնասիրության հիմքում ընկած մեթոդաբանության մեջ: Պատմական հետազոտական մեթոդներից զատ ատենախոսն օգտագործել է համեմատական, վիճակագրական հետազոտական մեթոդները: Ուսումնասիրության կարևորագույն հիմքերից է նաև արխիվային փաստաթղթերի վերլուծությունը: Ատենախոսությունը կարևոր ներդրում է Հայաստանի քաղաքական գիտության մեջ՝ լրացնելով լոգիստիկ համակարգերի ոլորտում առկա հետազոտական բացը:

Մեղմագիրը համապատասխանում է ատենախոսության տեքստին և արտացոլում է դրա բովանդակությունը անհրաժեշտ ամբողջականությամբ: Ն.Մարգարյանի ատենախոսությունը կարող է հիմք հանդիսանալ աշխարհաքաղաքական հանգամանքներով պայմանավորված Հայաստանի Հանրապետության տրանսպորտային-լոգիստիկ համակարգի մարտահրավերների և ազգային անվտանգության սպառնալիքների կանխատեսման համար: Բոլոր արդյունքները հրապարակված են առաջատար ամսագրերում: Նյութի ամբողջականությունն ու ճշգրտությունն արտացոլված են հրատարակված 9 գիտական հոդվածներում:

### ***Մեկնաբանություններ և նկատառումներ***

*Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար առաջարկվող հետևյալ դիտողությունները.*

1. Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում ատենախոսը վերլուծում է «տրանսպորտային համակարգ», «տրանսպորտային-լոգիստիկ համակարգ» հասկացությունները, նշելով տարբեր հեղինակների սահմանումների առանձնահատկությունները, տարբերությունները և թերությունները:

Նպատակահարմար կլիներ համեմատության արդյունքում խմբերի բաժանել այդ մոտեցումները՝ ներկայացնելով դրանք աղյուսակի տեսքով, ինչը հնարավորություն կտար ավելի համակարգված ներկայացնել մոտեցումների միջև բովանդակային տարբերությունը: Բացի այդ, մեծամասամբ օգտագործված են ռուսալեզու հեղինակների մոտեցումները «տրանսպորտային համակարգ», «տրանսպորտային-լոգիստիկ համակարգ» սահմանման վերաբերյալ:

2. Հիմնավորելով այն միտքը, որ տրանսպորտային համակարգի հետ կապված հարցերը լայնորեն կիրառվում են որպես քաղաքական ճնշման գործիք, հեղինակը հիմնականում անդրադառնում է XIX-XX դդ. տեղի ունեցող պատմական իրադարձություններին, մինչդեռ XX դարավերջի և XXI դարի օրինակներին ավելի քիչ ուշադրություն է տրամադրվում: Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե ժամանակակից օրինակներն ավելի ընդլայնված և մանրամասն ներկայացվեին:
3. Հեղինակն ուսումնասիրել է ԵԱՏՄ անդամ երկրների ռազմավարական փաստաթղթերը՝ երկրի անվտանգության ապահովման համատեքստում տրանսպորտային համակարգի դերի ընկալման վերլուծության նպատակով, իսկ հետագայում այդ մոտեցումները համեմատվել են ՀՀ ռազմավարական փաստաթղթերում առկա մոտեցումների հետ: Տարածաշրջանային զարգացումների տրամաբանությունից ելնելով նպատակահարմար կլիներ ուսումնասիրել նաև Թուրքիայի և Ադրբեջանի ռազմավարական փաստաթղթերում արտացոլված մոտեցումները:
4. Ատենախոսության թեմայից ելնելով, աշխատանքի վերջին գլխում նպատակահարմար կլիներ անդրադառնալ նաև Հայաստանի այսօրվա քաղաքական դիսկուրսի շրջանակներում ՀՀ տրանսպորտային-լոգիստիկ համակարգի շուրջ ընթացող քննարկումներին, մանավանդ հաշվի առնելով 2026թ.-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունները և տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական փոփոխությունները:
5. 3-րդ գլխում և եզրակացության բաժնում ցանկալի կլիներ տարբերակել վերլուծական եզրահանգումները քաղաքական գնահատականներից:
6. Հայաստան-Ադրբեջան ներկա ապաշրջափակման գործընթացը ներկայացված է հիմնականում միակողմանիորեն՝ շեշտադրելով գործընթացի հավանական բացասական հետևանքները («Ձանգեզուրի միջանցք» նախագծի տրամաբանության մեջ) և չդիտարկելով դրա հավանական դրական հնարավորությունները ՀՀ տեսանկյունից:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ամբողջական գիտական արժեքը: Հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու իրականացված հետազոտական աշխատանքը, վերջնարդյունք եզրահանգումները և առաջարկությունները, կարծում ենք, որ Նինա Իշխանի Մարգարյանի քաղաքական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հայաստանի հանրապետության տրանսպորտային-լոգիստիկ զարգացման քաղաքական չափումը ազգային անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակը արժանի է ԻԳ 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ ք.գ.թ. գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ԲՊՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2026թ. հունվարի 7-ի թիվ 4 նիստում:

  
Վարդան Ասլանյան

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի  
ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ժ/պ

«Փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանի տրոհագրությունը հաստատում եմ»:  
ԲՊՀ գիտական քարտուղար՝



Հասմիկ Փիլավջյան

**Տեղեկություններ առաջատար կազմակերպության մասին.**

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հասցե՝ ք. Երևան 0002, Թումանյան 42,

Հեռ.՝ (010) 522 020